ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«14» «Նոյեմբերի» 2025 թվական № 445-Ա

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ «ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏԱՏԵՂԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N897-Ն որոշման հավելվածի 4-րդ կետով և 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1072-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի հուլիսի 23-ի ՈՆ/31.4.6/10479 և սեպտեմբերի 23-ի ՈՆ/31.4.5/13227 զեկուցագրերով ներկայացված նյութերը (լրացված հատատեղերի հաշվեգնահատման ցուցակները և հատատեղերի անձնագրերը, քարտեզ-սխեմաները), ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարի 2025 թվականի օգոստոսի 21-ի N316-Ա հրամանով ստեղծված մասնագիտական հանձնախմբի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 8-ի ՈՆ/13.5/14001 զեկուցագրով ներկայացված արձանագրությունը (հետազոտման ակտ).

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության Արագածոտնի, Արծվաբերդի, Գյումրիի, Տաշիրի, Նոյեմբերյանի, Սևքարի և Ճամբարակի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառներում 2025 թվականի լրացուցիչ հատատեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Միրզոյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի բնափայտի մթերման և իրացման աշխատանքների իրականացումը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մեյմարյանին:

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

11/14/2025

X

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Երևան

Հավելված
շրջակա միջավայրի նախարարի
2025թ. 11 «14» -ի N445-Լ հրամանի

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-Ի ՄԻ ՇԱՐՔ «ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏԱՏԵՂԵՐ

№	«Անտառտնտեսություն» մասնաճյուղ	Հատման տեսակը, սանիտարական (քամատապալ)	
		ծավալը, խմ	շինափայտ, խմ
1	Արծվաբերդի	642.23	0
2	Արագածոտնի	148.8	4.2
3	Նոյեմբերյանի	1322.22	43.02
4	Սևքարի	356.89	0
5	Տաշիրի	89	8
6	Գյումրի	443.37	82.86
7	Ճամբարակի	101.5	0
ԸՆԴԱՄԵՆԸ		**3104.01**	**138.08**